

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԱՆ պրորբացիայի պետական ծառայության 2018թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում իրականացրած գործունեության վերաբերյալ

ՀՀ ԱՆ պրորբացիայի պետական ծառայությունը բաղկացած է 13 տարածքային մարմիններից, որոնք գործում են Հայաստանի Հանրապետության մարզերում /թվով 10/ և Երևան քաղաքում: Մարզային բաժիններն ունեն 38 նստավայր:

Պրորբացիայի պետական ծառայությունն իրականացնում է ազատությունից զրկելու հետ չկապված քրեական պատիժներ՝ տուգանքը, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, հանրային աշխատանքները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում պատժից պայմանական վաղաժամկետ ազատված, պատիժը պայմանականորեն չկիրառված, հղի կանանց կամ մինչև 3 տարեկան երեխա ունեցող կամ այլ հիմքերով պատիժը հետաձգված անձանց նկատմամբ:

Ծառայությունում 2018թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել են հետևյալ քանակությամբ պատիժներ և վերահսկողություններ՝

	Պատիժների և վերահսկողությունների տեսակները և քանակները							Ընդամենը
	Տուգանք	Որոշակի պաշտոններ	Հանրային աշխատանք	Պատիժը պայմ. չկիրառել	Վարքի վերահսկ.	Պատժից պ/վ ազատել	Պատժի հետաձգում	
2017թ. փոխանցված	1299	243	393	1266	5	168	10	3384
2018թ. ստացված	461	97	112	528	3	226	3	1430
Ընդամենը	1760	340	505	1794	8	394	13	4814

Ծառայությունում 2018թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում հաշվառվել է 4432 շահառու, որոնցից 458-ը կանայք են, իսկ 64-ը՝ անչափահաս, որից 1-ը աղջիկ: Նրանց նկատմամբ նշանակվել է 2605 պատիժ, 2209 վերահսկողություն, ընդ որում 376 շահառու ունի կրկնակի, իսկ 3 շահառու՝ եռակի պատիժ և վերահսկողություն:

Ծառայությունում 2018թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում արխիվացվել է 929 անձնական գործ, ընթացքի մեջ է 3503 անձնական գործ:

1. Տուգանք. 1760 տուգանքի ընդհանուր գումարը կազմում է 646.181.284 ՀՀ դրամ, որից փաստացի կատարվել է 315 տուգանք, փաստացի գանձված գումարը կազմում է 67.649.400 դրամ, իսկ մասնակի գանձվել է 40.031.046 դրամ: 880 տուգանք գտնվում է միջնորդություն ներկայացնելու ժամկետի մեջ, որոնց գումարը կազմում է 359.704.767 ՀՀ դրամ, 226 տուգանք տարաժամկետված է, որոնց գումարի չվճարված մասը կազմում է 77.765.638 ՀՀ դրամ, 141 տուգանքի կատարումը հետաձգվել է, որոնց չվճարված գումարը կազմում է 56.357.100 ՀՀ դրամ, 29 շահառուի մոտ տուգանքի կատարումը դադարեցվել է նոր հանցանք կատարելու փաստով /կալանավորվել են/, ընդհանուր

գումարը՝ 15.859.000 ՀՀ դրամ, 36 տուգանք կարճվել է, որոնց չվճարված գումարը կազմում է 9.228.333 ՀՀ դրամ / 12 մահ, 22 վաղեմություն, 1 համաներում, 1 օրենքի փոփոխություն /:

Ծառայությունում փաստացի ընթացքի մեջ է 1276 տուգանք, որոնց գումարի չվճարված մասը կազմում է 509.686.505 դրամ:

1760 տուգանք պատժից 220-ը նշանակվել է կանանց, իսկ 4-ը՝ անչափահասների նկատմամբ:

2. Հանրային աշխատանքներ. Հաշվետու ժամանակաշրջանում հանրային աշխատանքների ձևով պատիժ է նշանակվել 505 շահառուի նկատմամբ. որից 281 անձնական գործ գտնվում է ընթացքի մեջ, որոնցից ներկայումս աշխատում են 157-ը, 69-ի վերաբերյալ կնքվում են պայմանագրեր, իսկ 55-ը՝ չեն աշխատում /13 հետախուզում, 25-ի վերաբերյալ ներկայացվել է պատիժը փոխարինելու միջնորդություն, 12 բողոքարկվել է վերաքննիչ դատարան, 2-ը հրաժարվել են աշխատել, իսկ պատիժը փոխարինելու միջնորդությունը մերժվել է, 3-ի պատիժը ընդհատված է/, 90 հանրային աշխատանքներ փաստացի կատարվել են, 112-ի պատիժը կասեցվել է /111-ը գտնվում են ազատազրկման մեջ, 1-ը գտնվում է զինվորական ծառայության մեջ /, 8-ի պատիժը կարճվել է /4 մահ, 2-ը դատարանի որոշմամբ, 2 վաղեմությամբ/, 9 շահառուի պատիժը դադարեցվել է նոր հանցանք կատարելու փաստով /կալանավորվել են/:

505 հանրային աշխատանքներ պատժատեսակից 29-ը նշանակվել է կանանց նկատմամբ:

Հանրային աշխատանքներ պատժատեսակի իրականացումն ապահովելու և այն առավել հանրօգուտ դարձնելու նպատակով Պրոբացիայի պետական ծառայության բաժինները համագործակցում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հետ, որոնց հետ կնքվում են պայմանագրեր, հետագա գործընթացի կազմակերպման նպատակով:

3. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատիժ կրող շահառուների թիվը կազմում է 340, որոնցից 270-ի գործերը գտնվում են ընթացքի մեջ, հաշվառումից հանվել են 67 շահառու՝ պատիժը փաստացի կատարելու հիմքով, 1-ը կասեցված է դատարանի որոշմամբ, 1 շահառուի պատիժը դադարեցվել է նոր հանցանք կատարելու փաստով, 1 անձնական գործ կարճվել է շահառուի մահվան հիմքով:

340 որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատժից 24-ը նշանակվել են կանանց նկատմամբ:

340 որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատժից 271-ը վերաբերվում են տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելուն, իսկ 69-ը՝ այլ գործունեությունից:

4. Վերահսկողություններ. 1794 շահառուի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, որոնցից ընթացքի մեջ են 1402-ը, 364-ի նկատմամբ սահմանված փորձաշրջանի ժամկետը փաստացի ավարտվել է, 4-ի փորձաշրջանը կարճվել է /2

համաներում, 1 նոր հանցանք, 1 մահվան հիմքով /, 17-ի նկատմամբ փորձաշրջանը դադարեցվել է նոր հանցանք կատարելու հիմքով /կալանավորվել են/, 3-ի փորձաշրջանը վերացվել է բաժանմունքի միջնորդության հիման վրա:

1794 փորձաշրջանից 165-ը նշանակվել են կանանց, իսկ 60-ը՝ անչափահասների նկատմամբ:

Ծառայությունում հաշվառված 8 անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է կիրառվել է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց:

Փորձաշրջանի մեջ գտնվող 42 շահառու զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության:

Փորձաշրջանի մեջ գտնվող 35 շահառուի անձնական գործերը ստացվել են ՀՀ ՊՆ տարբեր զորամասերից:

Վերահսկողությունից խուսափող 38 դատապարտյալ գտնվում է հետախուզման մեջ:

----- Ազատազրկման ձևով նշանակված պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատված դատապարտյալներից պրոբացիոն ծառայությունում, ըստ ստացված որոշումների, հաշվառվել են 394 շահառու, որոնցից 271-ի նկատմամբ վերահսկողությունն ընթացքի մեջ է, 117-ը՝ փաստացի ավարտվել է, իսկ 3 դատապարտյալի նկատմամբ վերահսկողությունը դադարեցվել է նոր հանցանք կատարելու փաստի հիման վրա /կալանավորվել են/, 1-ի փորձաշրջանը վերացվել է բաժանմունքի միջնորդության հիման վրա:

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատվածներից 346-ը տղամարդ են, իսկ 48-ը կին:

Վերահսկողությունից խուսափող 8 դատապարտյալ գտնվում է հետախուզման մեջ:

----- Պրոբացիայի ծառայությունում հաշվառված են պատժի կրումը հետաձգված 13 շահառու, որոնցից 12-ի պատիժը հետաձգված է հիվանդության պատճառով, 1-ը ունի մինչև 3 տարեկան երեխա:

Հաշվառված 13 դատապարտյալից 9 տղամարդ են, իսկ 4-ը կին: